# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 01-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵԱ-ԳՀԾՁԲ-25/52**

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար շարժակազմի քիմմաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԳՀԾՁԲ-25/52 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել Հավելված 1-ով ներկայացված Տեխնիկական բնութագիրը ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Հրավերի Հավելված 1-ով ներկայացված ապրանքի նկարագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«Ծառայության նպատակը է ավտոմեքենաների ամբողջական քիմմաքրումն է՝ ներքին և անհրաժեշտության դեպքում՝ արտաքին մակերեսների խորը մաքրման միջոցով: Քիմմաքրման ծառայությունը պետք է իրականացվի որակյալ, էկոլոգիապես անվտանգ նյութերով՝ պահպանելով մեքենաների ներքին հարդարման և տեխնիկական վիճակը:Տրանսպորտային միջոցի ավտոմեքենայի, միկրոավտոբուսի Հայգեր, Գազել, Ժոնգ-Թոնգ, ՄԱՆ (Գազելի նստատեղերը կտորից են՝ կարող է լինի անհրաժեշտություն քանդեն և հանված վիճակում իրականացնեն քիմ մաքրման աշխատանքները) մակնիշի ավտոբուսների սրահի հիմնովին մաքրում(հատակի, առաստաղի, նստատեղերի, ապակիների, կողային դետալների) մաքրությունը պետք է իրականացվի բարձրորակ նյութերով:Որակյալ և հուսալի քիմմաքրում ավտոմեքենաների համար՝ նախատեսված կազմակերպության օգտագործման տակ գտնվող տրանսպորտային միջոցների համար: Քիմմաքրումը պետք է իրականացվի մանրակրկիտ և մասնագիտական մոտեցմամբ՝ ներառելով մեքենայի ամբողջ սրահի խորը մաքրում, օդափոխման համակարգի հոտազերծում, մակերեսների ախտահանում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ արտաքին որոշ հատվածների (անիվներ, շարժիչի խցիկ, բեռնախցիկ) մաքրում:Ծառայությունը պետք է իրականացվի շրջակա միջավայրի և մարդու առողջության համար անվտանգ նյութերով, պահպանելով մեքենայի ինտերիերի նյութերի ամբողջականությունը և գունային հագեցվածությունը:Քիմմաքրումը պետք է ներառի ոչ միայն նստատեղերի մակերեսային մաքրում, այլև գործվածքների խորը մշակում՝ լաքաների, բծերի, փոշու, կենդանական մազերի և տհաճ հոտերի ամբողջական վերացումով:Մաքրումը ենթադրում է հետևյալ հատվածների մշակում՝ Նստատեղեր (գործվածք կամ կաշի՝ ըստ մեքենայի տեսակների), Հատակային գորգեր և հատակի ծածկույթներ, Առաստաղի մակերես (ներառյալ բծերի հեռացում), Վահանակ, դռների վահանակներ և բոլոր պլաստիկ/կաշվե մակերեսներ, պատուհանագոգ ներսից և դրսից, բռնակներ և կախիչներ, Օդափոխման և հովացման համակարգի վանդակներ՝ ախտահանիչ նյութերով, Բեռնախցիկի մաքրում (հատկապես՝ մեծ մեքենաների դեպքում), Ըստ անհրաժեշտության կամ պատվիրատուի պահանջի, կարող է իրականացվել նաև արտաքին հատվածների մասնակի քիմմաքրում՝ ներառյալ անիվների և շարժիչի տարածքի մակերեսային մաքրում:Ծառայությունը պետք է իրականացվի բացառապես բարձրորակ քիմիական միջոցներով, որոնք ունեն սերտիֆիկացում, անվտանգ են մարդկանց առողջության, ինչպես նաև մեքենայի ներքին նյութերի, (գործվածք, կաշի, պլաստիկ) համար: Ակնկալվում է, որ կատարվող քիմմաքրումից հետո չեն մնա քիմիական հոտեր, խոնավության զգացում կամ նյութերի գունաթափում:Մատակարարը պարտավորվում է ներկայացնել օգտագործվող միջոցների անվանումներն ու բնութագրերը՝ անհրաժեշտության դեպքում կցելով անվտանգության փաստաթղթեր (MSDS):Ծառայության մատուցումը պետք է իրականացվի՝ պատվիրատուի տարածքում՝ շարժական քիմմաքրման սարքավորումների կիրառմամբ քիմմաքրում պետք է սկսել յուրաքանչյուր օր ժամը 20:00-ից սկսած, իսկ շաբաթ և կիրակի՝ 13:00 ից հետո երբ մեքենաները գտնվում են հավաքակայանում, ըստ պատվեր հայտի պետք է քիմաքրումը իրականացվի առավելագույնը 20 մեքենա օրական: Ծառայությունն անհրաժեշտ է իրականացնել փուլային եղանակով՝ համաձայնեցված ժամանակացույցով: Մատակարարը պարտավորվում է իրականացնել ծառայությունը բարձր որակով՝ առանց մեքենայի ինտերիերի վնասման: Պատվիրատուն ունի լիարժեք իրավունք՝

մաքրումից հետո գնահատել արդյունքը և որակի թերությունների առկայության դեպքում՝ պահանջել անվճար վերամշակում: Քիմմաքրումից առաջ և հետո անհրաժեշտ է իրականացնել մեքենայի վիճակի փաստաթղթային կամ լուսանկարային գրանցում, որը կհանդիսանա վերահսկողության հիմք: Մատակարարը պետք է կարողանա ապահովել ոչ միայն մաքրություն, այլև մեքենաների ներսում հիգիենիկ և թարմ միջավայր՝ առանց վնասելու նյութերի կառուցվածքը կամ մեխանիկական տարրերը: Ընհանուր մեքենաների քանակը 681 հատ»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 06)
Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am
Պատվիրատու՝ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ